ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԲԸԱՀԱՇՁԲ - 14-3

ք. Երևան "20" "հուլիս" 2012թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ա. Միրզաբեկյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝այսուհետև Պատվիրատու, մի կողմից և "Լիմուշ" ՍՊԸ-ն ի դեմս ընկերության տնօրեն Վ. Դարբինյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1 Կատարողը պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Պատվիրատուի հանձնարարությամբ կատարել սույն պայմանագրով նախատեսված տպագրական աշխատանքներ (այսուհետև՝ Աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել այդ աշխատանքի արդյունքները և վճարել դրա համար: Կատարողն Աշխատանքը կատարում է իր նյութերով ու սարքավորումներով և պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

1.2 Աշխատանքը կատարվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին և կանոններին, ինչպես նաև սույն պայմանագրի Հավելված N 1-ին համապատասխան:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող Աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

2.1.2 Կատարողի կողմից սույն պայմանագրով սահմանված ժամկետի խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.3 կետով նախատեսված տույժը:

2.1.3 Չընդունել Աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, սույն պայմանագրի 1.2 կետով սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ՝ պահանջելով Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը:

2.1.4 Մինչև Աշխատանքի արդյունքներն իրեն հանձնելը, ցանկացած ժամանակ միակողմանի լուծել սույն պայմանագիրը՝ Կատարողին վճարելով մինչև պայմանագրի կատարումից հրաժարվելու ծանուցումն ստանալու պահը կատարված աշխատանքին համարժեք գինը և հատուցել նրան պատճառված վնասները՝ առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով այդ մասին Կատարողին:

2.1.5 Առանց Աշխատանքի արդյունքի դիմաց վարձատրելու միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կատարողն ժամանակին չի սկսում Աշխատանքի կատարումը, կամ Աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար.

բ) Կատարողն բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները.

գ) Կատարողի կողմից կատարված Աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրով սահմանված պահանջներին.

դ) Կատարողի կողմից խախտվել են սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Աշխատանքի ապահովման համար սահմանված ժամկետները,

2.1.6 Առանց կատարված Աշխատանքի դիմաց վճարելու, պահանջել լուծելու սույն պայմանագիրը և հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե Կատարողից ստացած ոչ հավաստի տեղեկության հետևանքով կնքվել է Աշխատանքի կատարման այնպիսի պայմանագիր, որը չունի Պատվիրատուի նկատի ունեցած հատկությունները:

2.1.7 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել, եթե դրանք հայտնաբերվել են ՀՀ օրենսդրությամբ և սույն պայմանագրով սահմանված երաշխիքային ժամկետում:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Կատարողի մասնակցությամբ զննել և ընդունել սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը, իսկ Աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կատարողին:

2.2.2 Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ այդ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.2.3 Սույն պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք:

2.2.4 Սույն պայմանագրի 1.3 կետով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում թերություններ հայտնաբերելու դեպքում Կատարողին ներկայացնել թերությունների ողջամիտ ժամկետում վերացման պահանջ:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել ընդունելու սույն պայմանագրին համապատասխան կատարված Աշխատանքի արդյունքը և վճարելու վճարման ենթակա գումարները:

2.3.2 Մինչև Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը, Պատվիրատուի կողմից ցանկացած ժամանակ սույն պայմանագիրը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու փաստացի կատարված Աշխատանքի համարժեք գինը, բացառությամբ սույն պայմանագրի ~~2.1.5 կետով~~ նախատեսված դեպքի:

2.3.3 Մինչև Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին ներկայացնելը ցանկացած ժամանակ հրաժարվել սույն պայմանագրի կատարումից՝ Պատվիրատուին հատուցելով հրաժարման արդյունքում պատճառված վնասները՝ այդ մասին առնվազն 20 օր առաջ տեղեկացնելով նրան:

2.3.4 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը, իսկ չկատարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները:

2.3.5 Պատվիրատուի համաձայնությամբ վաղաժամկետ կատարել Աշխատանքը:

2.3.6 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել փոխհատուցել իրեն պատճառված վնասները և վճարելու սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը, եթե Պատվիրատուն բազմիցս խախտել է աշխատանքի համար վճարման պայմանները:

2.4 Կատարողն պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրով սահմանված պայմաններով ապահովել Աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրի 2.1.5 կետով նախատեսված հիմքերով սույն պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները:

2.4.3 Սույն պայմանագրի 2.1.3 կետով նախատեսված դեպքում Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում անվճար ապահովել թերությունների վերացումը և Պատվիրատուին վճարել սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.4.4 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.5 Պատասխանատվություն կրել իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

2.4.6 Կատարել Աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում սույն պայմանագրի պայմաններին:

2.4.7 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է Աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

2.4.8 Անմիջապես սկսել սույն պայմանագրով նախատեսված աշխատանքը՝ Պատվիրատուի կողմից համապատասխան տարածք տրամադրելուց հետո, իսկ աշխատանքը ավարտել Հավելված N 1-ով սահմանված ժամկետում:

2.4.9 Իր հաշվին Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները, եթե դրանք ի հայտ են եկել երաշխիքային ժամկետի ընթացքում:

2.4.10 Աշխատանքների առնվազ 75%-ն կատարել անձամբ՝ առանց ենթակապալի:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. Աշխատանքի հանձնման և ընդունման կարգը

3.1 Կատարողն Աշխատանքի կատարման ավարտից 2 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին է ներկայացնում կատարված Աշխատանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ:

3.2 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հինգ օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Աշխատանքի արդյունքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.3. Աշխատանքի կամ սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի Աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները սույն պայմանագրին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կատարողն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ Աշխատանքներ:

3.4 Կատարողի կատարած Աշխատանքի արդյունքը Պատվիրատուի կողմից ընդունված է համարվում հանձնման-ընդունման արձանագրությունը երկկողմանի ստորագրելու(հաստատելու) պահից:

4.Պայմանագրի գինը

4.1. Սույն պայմանագրով Կատարողի կատարած Աշխատանքի գինը ներառում է տվյալ պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և շահույթը: Պայմանագրային ընդհանուր գինը ներկայացված է սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 2 Հավելվածում՝ Աշխատանքի կատարման ժամանակացույցում, որը կազմում է 812 000(ութ հարյուր տասներկու հազար) դրամ:

4.2 Պատվիրատուն կատարած Աշխատանքի դիմաց վճարումը կատարում է դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 15 բանկային օրվա ընթացքում:

5. Կողմերի պատասխանատվությունը

5.1 Կատարողն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի N 1 Հավելվածով նախատեսված պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի 2.1.5 կետով նախատեսված դեպքերում պայմանագրի լուծման, 2.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից Աշխատանքի արդյունքը չընդունվելու, Աշխատանքը չկատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5%-ի չափով:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի չկատարած մասի գնի 0,05%-ի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Աշխատանքն կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարներից:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ պայմանագրի չկատարած մասի գնի 0,05%-ի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

5.8 Կատարողի կողմից սույն պայմանագրով նախատեսված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները պատվիրատուի սահմանած ժամկետում չվերացնելը հանգեցնում է պատվիրատուի կողմից գնման պայմանագրի միակողմանի լուծմանը:

5.9 Այն դեպքում, երբ «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ հսկողության և (կամ) վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում մինչև սույն պայմանագրի կնքումը Կատարողն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ) կամ Կատարողին հաղթող ճանաչելու(ընտրելու) մասին որոշումը չի համապատասխանում ՀՀ օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել սույն գնման պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև սույն պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային սույն պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծարման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ Կատարողն պարտավոր է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասները, այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը սույն պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

5.10 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը չի կարող երկարաձգվել:

6. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին գրավոր տեղյակ պահելով մյուս կողմին:

7. Այլ պայմաններ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում երկկողմանի ստորագրման պահից և գործում է մինչև փախադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

7.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր պայմանագիր (Համաձայնագիր) կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

7.3 Սույն պայմանագիրը չի կարող մասնակիորեն կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի:

7.4 Սույն պայմանագիրը կարգավորվում է ՀՀ օրենսդրությամբ:

7.5 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

7.6 Սույն պայմանագիրը կազմված է 5 թերթից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1 և 2 Հավելվածները՝ բաղկացած են 1-ական թերթից՝ հանդիսանում են սույն Պայմանագրի անբաժանելի մասը:

7.7 Սույն պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.8 Սույն պայմանագրով նախատեսված՝ Պատվիրատուի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտը, իսկ Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ԱՌՀ ինստիտուտը:

8. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Լիմուշ» ՍՊԸ
ք. Երևան, Բագրևանդի 5	ք. Երևան, Ավան, Չարենցի թաղ. 9շ., բն 22
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի	"Պրո Կրեդիտ բանկ" ՓԲԸ
գործառնական վարչություն	հ/հ 253000040811-0010
ՀՀ 900011117026	ՀՎՀՀ 00847729
ՀՀ պաշտպանության նախարարության տեղակալ-	տնօրեն
ՆՏԱ դեպարտամենտի պետ	
Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ	Վ. ԴԱՐԲԻՆՅԱՆ

Հավելված N 1
N ԲԸԱՀԱՇՁԲ-14-3 պայմանագրի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Տեխնիկական բնութագիրը
1	<<Հայկական բանակ>> հանդեսի հավելված 1-2	Ձևաչափը՝ 60x84սմ, 1/16, էջը՝ 15.0x21.0 սմ չափսի, կտրելուց հետո՝ 14.5x 20.0 սմ չափսի, տպագրված՝ օֆսեթ 70-գր. Սպիտակ թղթով, տեքստը՝ 240 էջ, տպագրությունը՝ միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ կազմը՝ տպագրված 200-գր. Կավճապատ թղթով, տպագրությունը՝ գունավոր, լամինացված, փափուկ կազմ՝ ծալվածքով (կլապան), ծալվածքը՝ աջից և ձախից՝ 96-ական մմ, կռնակը՝ ոչ ավելի, քան 14 մմ լայնքով, տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում:
2	<<Հայկական բանակ>> հանդեսի հավելված 3	Ձևաչափը՝ 60x84սմ, 1/16, էջը՝ 15.0x21.0 սմ չափսի, կտրելուց հետո՝ 14.5x 20.0 սմ չափսի, տպագրված՝ օֆսեթ 70-գր. Սպիտակ թղթով, տեքստը՝ 120 էջ, տպագրությունը՝ միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ կազմը՝ տպագրված 200-գր. Կավճապատ թղթով, տպագրությունը՝ գունավոր, լամինացված, փափուկ կազմ՝ ծալվածքով (կլապան), ծալվածքը՝ աջից և ձախից՝ 96-ական մմ, կռնակը՝ ոչ ավելի, քան 7 մմ լայնքով, տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում:
3	<<Հայկական բանակ>> հանդեսի հավելված 4	Ձևաչափը՝ 60x84սմ, 1/16, էջը՝ 15.0x21.0 սմ չափսի, կտրելուց հետո՝ 14.5x 20.0 սմ չափսի, տպագրված՝ օֆսեթ 70-գր. Սպիտակ թղթով, տեքստը՝ 120 էջ, տպագրությունը՝ միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ կազմը՝ տպագրված 200-գր. Կավճապատ թղթով, տպագրությունը՝ գունավոր, լամինացված, փափուկ կազմ՝ ծալվածքով (կլապան), ծալվածքը՝ աջից և ձախից՝ 96-ական մմ, կռնակը՝ ոչ ավելի, քան 7 մմ լայնքով, տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Լիմուշ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Հավելված N 2
N ԲԸԱՀԱՇՁԲ-14-3 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ	Գնման առարկայի անվանումը	Չափման միավոր	Գնման առարկայի քանակ	Գնման առարկայի Գինը /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Գնման ժամանակացույց 2012թ.
1	<<Հայկական բանակ>> հանդեսի հավելված 1-2	հատ	200	2030	406000	հուլիս
2	<<Հայկական բանակ>> հանդեսի հավելված 3	հատ	200	1015	203000	հոկտեմբեր
3	<<Հայկական բանակ>> հանդեսի հավելված 4	հատ	200	1015	203000	դեկտեմբեր
ԸՆԴԱՄԵՆԸ			812 000 / ութ հարյուր տասներկու հազար/			

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ-
ՆՏԱ դեկպարտամենտի պետ

Ա. ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Լիմուշ» ՍՊԸ
տնօրեն

Վ. ԴԱՎԹԻՆՅԱՆ